

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ ՁՈՒՂԱՅԵՑՈՒ ՀԱՇՎԵՏՈՒԹՅԱՐԸ, աշխատա-
նիւրութեամբ Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Դ. Փափագյանի: ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան,
1984, 424 էջ

«Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշ-
վետումարի» հրատարակութեամբ հիմք է դրե-
վում մի նոր մատենաշարի՝ «Տնտեսական պատ-
մութեան վավերագրերի» լույսընծայման խիստ
կարևոր և պատմագիտական առումով հրատապ
գործին: Մատենադարանի և արխիվների ֆոն-
դերում պահպանվել են հազարավոր մեծ ու
փոքր ծավալի վավերագրեր, որոնք անգնահա-
տելի նյութ են պարունակում ոչ միայն բուն
Հայաստանի, այլև դրացի ու հեռավոր երկր-
ների տնտեսական կյանքի տարրեր ոլորտների
վերաբերյալ: Գրախոսվող աշխատության երե-
վան գալը ինքնըստինքյան վկայում է, որ ան-
հրաժեշտ է լուրջ ուշադրություն բեռնել նմա-
նաբնույթ վավերագրերի հրատարակման և գի-
տական հասարակայնության սեփականություն
դարձնելու շնորհակալ գործին:

Հայտնի է, որ վաղեմի պատմական ժամա-
նակներից ի վեր Արևելքը և Արևմուտքը կապող
հիմնական կարավանային ուղիները անցել են
Հայաստանի վրայով: Այդ է եղել պատճառը, որ
Հայաստանը բոլոր ժամանակներում եղել է
տարանցիկ առևտրի կարևոր կենտրոններից
մեկը, իր մասնակցությունը բերելով այդ ա-
ռևտրին նաև սեփական արհեստագործական ար-
տադրանքով: Նույնիսկ թյուրք-սելջուկյան, թա-
թար-մոնղոլական ավերասփռիչ արշավանքնե-
րը, դրանց հետևանք հանդիսացող արտագաղ-
թերը ի վիճակի չեղան վերջ տալու Հայաստանի
նշանակությանը Արևելք—Արևմուտք առևտրում:

XVII դարում այդ սիստեմ ավելի քան սկի-
նառու դրսևորվեց Շահ-Աբաս I-ի կազմակեր-
պած «մեծ գաղթով»: Տեղահանելով Հին Ջու-
ղայի, Ագուլիսի, Դաշտի, Երևանի, Վանի և
Հայաստանի ուրիշ շատ վայրերի վաճառակա-
նությունն ու արհեստավորությունը և նրանց
հիմնական զանգվածը վերաբնակեցնելով Սպա-
հանի մոտ կառուցված նոր Ջուղայում, Շահ-
Աբասը հետապնդում էր Իրանի առևտուրն ու
արհեստագործությունը զարգացնելու նպատակ:
Եվ, հարկ է նշել, որ նա որոշակիորեն հասավ

իր այդ նպատակին: Այն հսկայական դերը, որ
սկսեց խաղալ նոր Ջուղան Արևելք—Արևմուտք
առևտրական առնչություններում, կասկածի են-
թակա չէ: Դրան պետք է ավելացնել, որ աշ-
խարհի տարրեր ծագերում, սկսած Ինդոնեզյան
և Ֆիլիպինյան կղզիներից մինչև Վենետիկ,
Մարսել, Ամստերդամ և այլուր սփռված հայ-
կական գաղութներն ու հայկական վաճառա-
կանական գրասենյակները յուրատեսակ վկայու-
թյունն են այն խոշոր դերի, որ խաղացել են հայ
վաճառականները համաշխարհային առևտրում,
այն էլ՝ աշխարհագրական մեծ հայտնագործու-
թյուններից հետո:

Պատահական չէր և այն, որ ասիական շուկա-
ները գրավելու իրենց ճիգերում անգլիական ու
հոլանդական վաճառականները կամ ասիական
ապրանքների տրանզիտը Ռուսաստանի վրա-
յով իրականացնելու ջանքերում՝ ուսումնական կա-
ռավարությունը փնտրում էին հայ վաճառա-
կանների համագործակցությունը, արտոնու-
թյուններ և առանձնաշնորհումներ էին ընձեռում
նրանց, անգամ պայմանագրեր կնքում: Զպետք
է մոռանալ, որ հայ վաճառականներն իրենց ա-
ռևտրական գործառնությունները կատարելով՝
հանդերձ «սեփական միջոցներով ու վարկե-
րով», գործում էին բոլոր գլխավոր համաշ-
խարհային շուկաներում և արտահանում էին ա-
մենաարժեքավոր ապրանքները: Նույն հեղի-
նակի վկայությամբ, նոր Ջուղայի հայ վաճա-
ռականները «մեր իմացած վաճառականներից
ամենափորձվածներն են»²:

Այս տեսանկյունից հարցը դիտարկելիս, լիո-
ւին ականերն է դառնում, թե ինչպիսի կարևոր
նշանակություն ունի Հովհաննես Տեր-Դավթյան
Ջուղայեցու հաշվետումարի (հաշվետապան)

¹ Տե՛ս John Bruce. Annals of the Honourable East-India Company. II, London, 1880, p. 617.

² Նույն տեղում, III, էջ 111:

Պատարակությունը: Նա ոչ միայն լավագույն վկայությունն է մեր ասածի և ցույց է տալիս հայ վաճառականության ծավալած գործունեության շրջանակները Հնդկաստանում, Նեպալում, Տիբեթում և Չինաստանում, այլև կարևորագույն մի վավերագիր է հիշյալ երկրների տնտեսական կյանքի վերաբերյալ:

Ովքեր զբաղվել են XVI—XVIII դդ. տնտեսական կյանքի պատմության հարցերով և ծանոթ են այդ բնագավառին վերաբերող փաստաթղթերին, մասնավորապես, վաճառականական հաշվեմատյաններին, բաջատղլակ են, թե ինչպիսի աշուխի ղեկավարություններ են դրանք հարուցում Հետազոտողներին: Այստեղ խոսքը գնում է ոչ միայն ժամանակի լեզվի մասին, որը ամբողջովին բարբառային է, խառնված տարալեզու տեղմիներին ու արտահայտություններին, այլև ղեկավարողներին իրենց, մասնագիտական սպեցիֆիկայի և այլն: Այս առումով հարկ է նշել, որ ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյանը և պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Դ. Փափաղյանը վիթխարի աշխատանք են կատարել ոչ միայն վերծանելու այդ ղեկավարողներին ձեռագիրը, այլև ստեղծել են գրեթե բոլոր բարբառային ու օտար բառերի մանրակրկիտ և խիստ արժեքավոր բառարան, բոլոր պահպանված և մատչելի աղբյուրների ու գրականության ուսումնասիրության հիման վրա աշխատել են բացահայտել բնագրում գործածված չափ ու կըշիռները, դրամական միավորների ներկայիս համարժեքները, ցույց են տվել (համապատասխան բացատրություններով) վաճառականներից գանձվող մաքսատուրքերն ու բոլոր այն վճարումները, որոնք կատարվել են Իրանում, Հնդկաստանում, Նեպալում և Տիբեթում խնդրո առարկա դարաշրջանում:

Հովհաննես Տեր-Դավյան Ջուղայեցու հաշվեմատյանը, որը վերաբերում է 1682—1693 թթ., մեզ պարզ պատկերացում է տալիս այն ունեցվածքային տարբերակման մասին, որ գոյություն է ունեցել Նոր Ջուղայի վաճառականական խավի միջավայրում: Վաճառականության մեջ առանձնացել են, մի կողմից, մեծահարուստ վաճառականները՝ խոջաները և աղաները, վաճառականության միջնախավը կամ, այսպես կոչված, «ընկեր» վաճառականները և մանր առևտրականները: Ակնհայտ է դառնում նաև, որ «ընկեր» վաճառականները վարկավորվել են խոջաների և աղաների կողմից, որպեսզի ի վիճակի լինեն հեռավոր առևտրական ճանապարհորդություններ կատարել՝ դրամադուխ վաստակելու նպատակով:

«Հաշվեմատարը» հետաքրքիր է այն առումով, որ ցույց է տալիս առևտրական այն ուղին, որով օգտվել են հայ վաճառականները Նոր

Ջուղայից Հնդկաստան և հարևան երկրներ անցնելու համար: Գրքին կից քարտեզում (էջ 284) ցույց է տրված այդ ուղին, որը Նոր Ջուղայից Շիրազի վրայով դալիս էր Բանդար-Աբաս, այստեղից Օմանի ծովով՝ Սուրաթ—Ավրանդարդ—Բուրհամիր—Սիրոնջ—Ագրա—Ջահանգարդ—Բենարես—Փաթնա—Փաթմանդու—Լհասա: Այս առևտրական ուղեգծի վրա ընկած բոլոր կարևոր վայրերում եղել են հայկական վաճառականական գաղութներ, մի պարագա, որը ցույց է տալիս, որ հայ վաճառականների կապերը Հնդկաստանի, Նեպալի և Տիբեթի հետ վաղնախ պատմություն են ունեցել և տևական բնույթ կրել: Տիբեթի վրայով էլ կապ է գոյություն ունեցել Չինաստանի հետ: Այս ինքնուրույնության մի կարևոր վկայություն է, որ հայ վաճառականությունը հիմնական Արևելք—Արևմուտք առևտրություններում կարևոր գործոն է եղել:

Հաշվեմատյանը հնարավորություն է ընձեռում սլարգելու այն հիմնական ապրանքատեսակները, որոնք հայ վաճառականները ներմուծել կամ արտածել են հիշյալ երկրներից: Այն հանգամանքը, որ Հովհաննես Տեր-Դավյան Ջուղայեցին Հնդկաստան վաճառելու է տարել անզիական մահող, ցույց է տալիս, որ այդ ապրանքը հավանաբար, ձեռք էր բերվում լեանտյան շուկաներում, հետևաբար հայ վաճառականների լեանտյան առևտրում կարևոր դեր է խաղացել անզիական գունավոր (կարմիր և կանաչ) մահուղը:

Հնդկական, Նեպալյան և տիբեթյան շուկաներում, գատնելով տվյալ դեպքում Հովհաննես Տեր-Դավյանի հաշվեմատյանից (և իրականում այդ այդպես էլ էր), առևտրի առարկա են եղել տարբեր վայրերի և յուրատեսակ հնդկական գործվածքները, թանկագին քարերը, արևելյան համեմունքները, Չինաստանում ձեռք է բերվել ձուլ ոսկի, Տիբեթում՝ արծաթ: Իսկ այն տվյալները, որ ընձեռում է մեզ հաշվեմատյանը, տեղական պահպանված տվյալների հետ համադրման դեպքում, խիստ արժեքավոր տեղեկություններ կարող են տալ ուղևորական տվյալ երկրների ժամանակի կենսամակարդակի և ապրուստի արժողության վերաբերյալ: Այդ տեսակետից մենք հետաքրքրություն են ներկայացնում այն փաստական տվյալները, որոնք վերաբերում են սննդամթերքի շուկայական մանրածախ գներին՝ կապված Հովհաննես Տեր-Դավյան Ջուղայեցու սեփական սննդի վրա կատարած ծախսումների հետ: Կարևոր են նաև սաթի առևտրի վերաբերյալ տեղեկությունները (հատկապես Տիբեթում), որոնք ցույց են տալիս հայ վաճառականության սերտ առնչությունները մերձավորյան շուկաների հետ:

Ինչ վերաբերում է փոխառվական և ալյաբր-նույթ բանկային գործառնությունների վերաբեր-յալ տվյալներին, ապա սրանք արժեքավոր են ոչ միայն նրանով, որ լիովին բացահայտում են նման գործարքների իրականացման եղանակնե-րը, այլև ցույց են տալիս, որ դրանք հետագա ժամանակներում էլ (ընդհուպ մինչև XIX դարի կեսերը) նույնական էին և ոչ մի փոփոխություն չէին կրել, որ դրանք սկիզբ են առնում ավելի վաղ դարերից և, ըստ էության, արդյունք էին քաղաքական ու պատերազմական այն հարա-փոփոխ իրադրության, որոնք վտանգի տակ էին դնում վաճառականի ինչքն ու կյանքը: Նման պայմաններում, բնականաբար, վաճառական-ները չէին կարող երթևեկել դրամական մեծ գու-մարներով, ուստի և վերցնում էին մուրհակներ, որոնք վճարվում էին կանոնավոր կերպով: Իսկ դա հնարավոր էր վաճառականական-գործակա-լական լայն ցանցի և փոխադարձ վստահության իրավունքի վրա պայմաններում միայն: «Հաշվե-տույմարում» պահպանված վկայությունները լա-վազունն են արտացոլում այդ:

Ինչպես ճիշտ մատնանշում են «Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետույմարը» զեր-քի առաջաբանի հեղինակները, հատուկ մասնա-գիտական հետազոտության կարիք ունի հաշ-վապահական այն սիստեմը, որ կիրառել է Հով-հաննես Տեր-Դավթյանը իր հաշվեմատյանում և, ամ «Թուզնամայում»: Բայց արդեն իսկ այն համառոտ բնութագրությունը, որ տալիս են ա-ռաջաբանի հեղինակները, բավականաչափ լույս է սփռում Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայե-ցու կիրառած սիստեմի վրա: Կարծում ենք, որ այդ առումով մասնագետները պետք է ուշադ-րություն դարձնեն լուկա Պալուիի և առհասա-րակ իտալական հաշվապահական սիստեմի և նոր Զուղայի հայ վաճառականության կիրառած հաշվապահական սիստեմի հարանմանություն-ների ու տարբերությունների վրա մի կողմից և արևելյան մյուս ազգությունների կիրառած հաշ-վապահական սիստեմի վրա՝ մյուս կողմից, բա-ցահայտելու համար փոխադրեցությունները: Այդ պարագան մեծապես կնպաստի հայ վաճառա-կանության կիրառած հաշվապահական սիստեմի ինքնության պարզաբանմանը: Այդ դեպքում մեզ, իհարկե, չպետք է շփոթեցնի այն հանգամանքը, որ գործածվող հաշվապահական տերմինները մեծ մասամբ արաբա-պարսկական ծագում ու-նեն: Ինքնըստինքյան հասկանալի է, որ հիմնա-կանում իրանական և հնդկական մահմեդական միջավայրում գործած հայ վաճառականները պետք է օգտվեին արաբական և իրանական տեր-միններից, բայց այդ ամենն էլ չէր կարող նշանակել, որ հաշվապահական սիստեմը ևս յուրացված էր նրանցից:

Այսպիսով, կարելի է հաստատապես ասել, որ Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հա-տարակված հաշվեմատյանը բավականաչափ հստակ պատկերացում է տալիս հայ միջին վա-ճառականների գործունեության ձևերի ու եղա-նակների, առևտրական գործունեության ոլորտ-ների, առուծախի ապրանքների, ստացած շա-հույթների մասին և այլն: Այն միաժամանակ ցույց է տալիս Հնդկաստանում, Նեպալում, Տի-բեթում և մասամբ Ձինաստանում հայ վաճառա-կանների ունեցած առևտրական գաղութների գրաված տեղն ու դիրքը, գործունեության ծա-վալը: Այսպիսով հնարավորություն է ընձեռվում փաստական հավաստի տվյալների հիման վրա ընդարձակելու հայ վաճառականության պատ-մությունը, բնութագրել նրա խաղացած դերը ա-րևելյան առևտրում, միևնույն ժամանակ բացա-հայտել նրա դերը հայ ժողովրդի պատմության մեջ:

Տարակույս չկա, որ լավ աշխարհածանոթու-թյունը, առևտրական առնչությունները եվրո-պական ու արևելյան երկրների հետ, մշտական շփումները, առաջավոր մշակութային ազդեցու-թյունները այդ դասին պետք է բավական ազդու դեր վերապահեն հայ ժողովրդի պատմության մեջ, որքանով որ մեծ էր նրանց գրաված տեղը առևտրի զարգացման ու ծավալման մեջ ամբողջ Ասիայում:

«Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշ-վետույմարը» եզակի, բայց ոչ միակ գրավոր հուշարձանն է, որը զախ է վկայելու հայ վա-ճառականության խաղացած դերը Ասիայում, մի հանգամանք, որը չեն ժխտել նաև օտարերկրա-ցիները, մասնավորապես՝ անգլիացիները, որոնք Հնդկաստանում սկզբնապես բավական լայն ար-տոնություններ էին շնորհում հայ վաճառական-ներին և նպաստում, որպեսզի այնտեղ նրանք կայուն գաղութներ հիմնեն:

Ինչպես արդեն նշեցինք, աշխարհի տարբեր մատենադարաններում և գրադարաններում պահ-վում են բազմաթիվ նմանաբնույթ հայկական ձե-ռագիր հուշարձաններ, որոնց հրատարակու-թյունը պարզապես անհրաժեշտություն է, որով-հետև դրանք այլևայլ երկրների տնտեսական կյանքի պատմությանը վերաբերող թանկարժեք նյութ պարունակելուց դատ, լրացուցիչ լույս են սփռում հայկական գաղութների պատմության վրա, համաշխարհային առևտրի ոլորտում հայ վաճառականության ծավալած գործունեության վրա: Գրախոսվող աշխատության լույսընծա-յում մի այդ գործը շատ է հնչում, որովհետև տրանսլան աշխատանքով Լ. Ս. Խաչիկ-յանը և Հ. Գ. Փափազյանը հաղթահարել են այն զլխավոր խոչընդոտը, որ ծառացած է եղել նը-ման աղբյուրների հրատարակության ճանա-

պարհին: Հիմնավոր աշխատությունը նրանք մըշակել են այն գլխավոր սկզբունքները, որոնք անհրաժեշտ են այդ աղբյուրների վերծանության, մեկնարանման և արժեքավորման համար: Այդ իմաստով պետք է ասել, որ «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարի ստեղծումը և այդ մատենաշարի առաջին գրքի «Հովհաննես Տեր-Գալթյան Զուգայեցու հաշվատուժարի» հրատարակումը մի ամբողջ երևույթ է մեր ժողովրդի անյայտի պատմության աղբյուրադիտական լիարժեք բաղա ստեղծելու գործում: «Հաշվատուժարին» նախորդող առաջաբանը, իր հերթին, մի կարևոր ուսումնասիրություն է՝ կատարված հիմնավոր և գիտական խոր ուսումնասնականությամբ:

Կուղևինը ավելացնել նաև, որ Լ. Ս. Նաչիկյանի և Հ. Գ. Փափազյանի աշխատասիրությամբ լույս աշխարհ է կաժ այս գործը, ամբողջությամբ

վերցրած, մեծ կարևորություն ունի նաև այն առումով, որ ըմբռնման բանալի է տալիս բազմաթիվ հրապարակված կամ անտիպ վավերագրերի, որոնք տնտեսական բնույթ չկրելով հանդերձ, էրբեմն նաև տնտեսական բնույթի տեղեկություններ են պարունակում: Կատարված է իսկապես մի արժեքավոր և մեծապես զնահատելի գործ, որը մեր աղբյուրագիտական բնույթի հրապարակումների մեջ ունի ուրույն տեղ և ուրույն արժեք:

Ցավալի է, սակայն, որ հրատարակությունը չունի ամփոփում ուղեկցող և մի որևէ օտար լեզվով, որն ավելի կրթաբարձրացներ նրա գիտական արժեքը և իր վրա կհրավիրեր ավելի լայն գիտական հասարակայնության ուշադրությունը:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ԿԻՆՅԱՆ

J. J. S. WEITENBERG, *Armenian dialects and the Latin-Armenian glossary of Autun. Տպագրված Medieval Armenian Culture* (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6). Chico, CA: Scholars Press, էջ 13-28:

Ֆրանսիացի գիտնական Հ. Օմոնը 1882 թ. հրապարակել էր լատին-հայերեն մի համառոտ բառացանկ, որը պարունակում էր 90 բառային միավոր: Նա այդ բառացանկը հայտնաբերել էր Ֆրանսիայի Ստուանի գրադարանում՝ մի լատիներեն ձեռագիր ժողովածուի վերջին երկու էջի վրա: Այդ հրապարակումից վեց տարի անց Ա. Կարիերը կարգում է բառացանկի հայերեն բառերը և այն հրատարակում արժեքավոր ծանոթագրություններով:

Այս ալի սկզբնաղբյուրի բարբառագիտական բնույթնայն է նվիրված Հայդենի համալսարանի պրոֆեսոր Զ. Վալտենբերգի ուսումնասիրությունը, որի մեջ բերվող լեզվական փաստերը և դրանց հիման վրա արվող հղբակացությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայերենագիտության համար:

Վալտենբերգը իր բնությունը կատարում է ոչ միայն Օմոնի և Կարիերի հրապարակումների, այլև Օտունի գրագրաբանից ստացած հիշյալ բառացանկի լուսանկարների՝ ուսումնասիրությամբ՝ հանդես բերելով հայերենի բարբառների նյութի լավատեղյակություն:

1 Բառացանկի ալի երկու էջի լուսանկարները հրապարակված են քննարկվող հոդվածում, բայց արտատպությունն այնքան անբարակ է, որ հնարավոր չէ վերծանել բոլոր բառերը:

Նախքան բուն լեզվական նյութի բնությունն անցնելը՝ Վալտենբերգը ձեռագրի վերաբերյալ կարևոր է համարում անել հետևյալ դիտողությունները.

1) Հայերեն բառերը բառացանկում գրված են լատիներեն տառերով: Դատելով տառատեսակների բնույթից՝ Օմոնը ձեռագիրը հատկացրել է IX դարի վերջին կամ X դարի սկզբներին:

2) Այս առումով, եթե նկատի չունենանք վիճական արձանագրությունները, բառացանկը և Մաշտոցի անվան Մատենադարանի 887 թ. գրքազիր ավետարանը հայերենի ամենահին գրավոր աղբյուրներն են, թեև հնարավոր է նաև, որ բառացանկը լինի ավելի հին: Վալտենբերգը բերում է մի բանի փաստեր, որոնք ենթադրել են տալիս, որ հիշյալ ձեռագիրը պիտի որ ընդօրինակություն լինի: Ձեռագրում, օրինակ, նրեատելի են բառերի գրության հաջորդականությունը խախտումներ, նույն բառում տառերի գրության շփոթություն, բառաշնչումներ և այլն, որոնք կարող էին լինել միայն քնագրի արտագրության ժամանակ:

Բառացանկի հայերենագիտական արժեքը մեծանում է հատկապես նրանով, որ այն, գրված լինելով լատիներեն տառերով, հայերեն լիճագող մի անձնավորության կողմից (ենթադրվում է լատին հոգևորական), իր վրա չի կրում դասական հայերենի ուղղագրության կնիքը, մի